ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2
<<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԱՇՁԲ-ԱՍ-17/2-Ա>> ԱՐՏԱԿԱՐԳ ԿԱՄ ԱՆԿԱՆԽԱՏԵՍԵԼԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան 01 փետրվարի 2017թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Մխիթարյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Բալայանը, Ա. Մարգարյանը, Լ. Թունյանը և Ա. Սիմոնյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. Հայտերի բացման մասին

Սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԱՇՁԲ-ԱՍ-17/2-Ա>> ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնման հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	Առաջարկի հերթական համարը	Գտնվելու վայրը, հեռախոսը
«Արփա-Սևան» ԲԲԸ	000034720	ք. Երևան, Վ. Վաղարշյան 20, հեռ.012211111(107)

Մրցույթի հայտերը բացվել են 2017 թվականի փետրվարի 1-ին, ժամը 12:00-ին ARMEPS համակարգի միջոցով:

2. www.armeps.am համակարգ մուտքագրված հայտը համակարգի միջոցով ներկայացվել է գնահատման:

3. Մասնակիցների կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը.

- «Արփա-Սևան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը:

4. Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմելու համապատասխանությունը սահմանված պայմաններին.

- «Արփա-Սևան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով նախատեսված պայմաններին համապատասխան:

5. <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԱՇՁԲ-ԱՍ-17/2-Ա>> ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

- Մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Տեղեկություններ մասնակցի կողմից առաջարկված գների վերաբերյալ

Աշխատանքի անվանումը	«Արփա-Սևան» ԲԲԸ		
	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Առաջարկված ընդանուր գինը
Արփա-Սևան N 2 թունելում առանձին վթարային հատվածների հիմնանորոգման աշխատանքներ	4 165 466 760 (Չորս միլիարդ մեկ հարյուր վաթսունհինգ միլիոն չորս հարյուր վաթսունվեց հազար յոթ հայուր վաթսուն)	833 093 352 (Ութ հարյուր երեսուներեք միլիոն իննսուներեք հազար երեք հարյուր հիսուներկու)	4 998 560 112 (Չորս միլիարդ ինը հարյուր իննսունութ միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար մեկ հարյուր տասներկու)

7. Գնահատման արդյունքում

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- «Արփա-Սևան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

- Հիմք ընդունել <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԱՇՁԲ-ԱՍ-17/2-Ա>> ծածկագրով հրավերի 7.2.4 կետի 1-ին ենթակետը «Արփա-Սևան» ԲԲԸ-ին հրավիրել բանակցությունների՝ առաջարկված գնի նվազեցման նպատակով, որը տեղի կունենա 07.02.2017թ.-ին ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի շենքում (Վարդանանց 13-ա):

- Մասնակցին՝ առաջարկել 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԱՇՁԲ-ԱՍ-17/2-Ա>> ծածկագրով հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել Մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԲԸՀԱՇՁԲ-ԱՍ-17/2-Ա>> ծածկագրով հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ _____ Է. Մխիթարյան

անդամներ _____ Ա. Բալայան

_____ Ա. Մարգարյան

_____ Լ. Թունյան

_____ Ա. Սիմոնյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան